Հավելված
ՀՀ վարչապետի N 1120 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտի ընդունման ժամկետը	Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական ակտի նախագծի ներկայացման կամ ընդունման համար պատասխանատու պետական կառավարման համակարգի մարմնի անվանումը	Իրավական հիմքը
1.	«Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման	2026 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Ֆինանսների նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-387-Ն օրենքի 1-ին հոդվածով նոր

	նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը				նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	խմբագրությամբ շարադրվող «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մաս:
2.	«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և համայնքների միջև տեսահսկման համակարգերին փոխադարձ հասանելիության ապահովման դեպքում տեսահսկման համակարգերով հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրավախախտումը կատարած անձանցից գանձված՝ համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե փոխանցվող գումարի չափը որոշելու բանաձևը և փոխհատուցման տրամադրման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	2026 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Ֆինանսների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-411-Ն օրենքի 1-ին հոդված:
3.	«Համայնքի ղեկավարի կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձանց կողմից վարչական մարմին հնարավոր վարչական իրավախախտման դեպքի մասին ներկայացված նյութերի հիման վրա նշանակված տուգանքների՝	2026 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Ֆինանսների	«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնա-

	համայնքի բյուջե փոխանցվող գումարի չափը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը				նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	հատկությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-395-Ն օրենքի 1-ին հոդվածով լրացվող 7.7-րդ հոդվածի 4-րդ մաս, «Վարչական իրավախախ-տումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-406-Ն օրենքի 25-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածում լրացվող 8-րդ մաս:
4.	«Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2007 թվականի ապրիլի 12-ի N 93-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանի ընդունում:	2026 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Էկոնոմիկայի նախարարություն	«Վարչական իրավախախտում-ների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-406-Ն օրենքի 20-րդ հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 255-րդ հոդված:

5.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1288-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Ֆինանսների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն-ներ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի 9-րդ հոդված:
6.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 388-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Պետական գույքի կառավարման կոմիտե Կադաստրի կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի 9-րդ հոդված:

7.	«Գաղտնի ընթացակարգով պետական գրանցում ստացած գույքերի վերաբերյալ տեղեկատվությունը համայնքներին տրամադրելու կարգն ու առանձնահատկությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Կադաստրի կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի 9-րդ հոդված:
8.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	2026 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	2026 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Պետական գույքի կառավարման կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ	«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-390-Ն օրենքի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ մաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ